

ՄՊՈՐՏԱՅԻՆ ԼԵՁՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐԸ

ABSTRACT

The paper introduces a small excerpt from a substantial study on the Language for Sport, focusing on its specific vocabulary. The paper aims at slicing different layers in Sports Vocabulary, which give the Language for Sport its unique lingo-stylistic coloring.

Բառը լեզվի նյութական հիմնական բաղադրիչն է, որ առանձին մակարդակներում տարբեր ելակետային սկզբունքներով ենթարկվում է ուսումնասիրությունների՝ բառերի ծագում, կազմություն (բառագիտություն) ձևաբանական, շարահյուսական յուրահատկություններ (քերականություն) և այլն (Виноградов, 1980): Բառն ունի երկու հիմնական դեր՝ այն կատարում է անվանողական և հուզաարտահայտչական գործառույթ: Քերականության համար կարևորը բառի անվանողական գործառույթն է՝ բառի բառային ու քերականական իմաստների քննությունը, իսկ ոճաբանության համար՝ բառի գեղարվեստական պատկեր, հուզաարտահայտչական երանգավորում ստեղծելու յուրահատկությունը կամ բառի գեղագիտական արժեքը:

Իհարկե, բառիմաստով պայմանավորված ոճական բովանդակությունը չի կարելի սահմանափակել միայն զգացականի արտահայտմամբ, կարևոր է նաև դատողական վերաբերմունքը, որով պայմանավորված է բառի ոճական արժեքը: Այս առումով ոճական արժեքի արտահայտման լավագույն միջոցներ են հոմանիշները, հականիշները, բազմիմաստությունը, փոխաբերությունը: Բառապաշարի ոճական դասակարգման հետ կապված ամենատարբեր մոտեցումներ են արտահայտվել: Գործառական սկզբունքով առաջնորդվելիս լեզվի բառապաշարը բաժանում են որկու խմբի՝ գրքային և խոսակցական (Гвоздев, 1952, Gairns, 1986): Նման դասակարգումը չընդունվեց՝ խիստ բևեռացվածության պատճառով (Ефимов, 1969, 196): Ա. Եֆիմովը առաջարկեց իմաստային-ոճաբանական դասակարգումը (Ефимов, 1969, 197): Այս և մյուս դասակարգումների (Валгина и др, 1971, 35, Галкина – Федорук, 1957, 79) թերությունն է համարվում այն, որ նկատի չեն առնվում բառերի ձևային ու իմաստային յուրահատկությունները (Մելքոնյան, 1984, 42): Այսօր

լեզվաբանության մեջ բառապաշարի ոճական դասակարգումը կատարվում է առաջին հերթին բառերի ձևը և իմաստը կարևորելով (Մելքոնյան, 1984, 43): Ասենք, որ սպորտային լեզվի բառապաշարի ոճաբանական արժեքը բացահայտելու համար մենք նկատի ենք ունեցել բառապաշարի շերտերը և ըստ իմաստի (հոմանիշներ, հականիշներ, բազմիմաստ բառեր, փոխաբերություններ), ինչպես և ըստ առաջացման աղբյուրի (համագործածական բառեր, խոսակցական բառեր, նորաբանություններ): Այս մոտեցման դեպքում ավելի ամբողջական պատկերացում կարելի է կազմել սպորտային բառապաշարի ոճաբանական բնույթի վերաբերյալ:

Բառապաշարի ոճական բնութագրումը կատարելիս իբրև ելակետ ընդունել ենք հետևյալ հանգամանքները՝

ա) բոլոր բառերը ոճական արժեք ունեն.

բ) բառերի դասակարգման ժամանակ նկատի են առնվում ձևը և իմաստը.

գ) հատուկ ուշադրություն է դարձվել ամսագրային լեզվի բառապաշարին, որն անհամեմատ հարուստ է լրագրային լեզվից:

Ահա այս սկզբունքներով էլ պայմանավորված՝ ներկայացնենք սպորտային բառապաշարի շերտերը՝ առանձնացնելով դրանց ոճական արժեքն ու հուզաարտահայտչական երանգավորումը:

ա) Համագործածական բառեր

Սպորտային բառապաշարում սրանք կազմում են ամենաստվար մասը, դրանք գործածվում են լրագրային ցանկացած ժանրում, ունեն գործածության մեծ հաճախականություն և ընդհանրապես լեզվի հիմքն են հանդիսանում: Դրանք օգտագործվում են ինչպես գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական, անպես էլ պաշտոնական, խոսակցական, գրասենյակային և այլ ոճերում:

Հայտնի է, որ այս շերտին հատուկ են պարզությունը, մատչելիությունն ու ընդհանրականությունը: Առանց այս բառաշերտի օգնության պարզապես անհնար է խոսք կառուցել:

Լեզվաբաններից ոմանք (Валгина, 1971, Галкина-Федорук, 1957) համարում են, որ այս բառաշերտը ոճականորեն չեզոք է, մյուսները (Ulman, S, 1962, Sheard, 1962) համոզված են, որ այս առումով չեզոք բառեր ընդհանրապես գոյություն չունեն, քանի որ յուրաքանչյուր բառ կարող է խոսքի մեջ տարբեր կիրառության պայմաններում ձեռք բերել փոխաբերական նշանակություն, հետևապես և ոճական առումով դառնալ նշույթավորված: Բայց կարևոր է, որ համագործածական այս բառերը *բազմիմաստ* են. «մի բան, որ բնորոշ չէ

հուզաարտահայտչական ոճական երանգավորում ունեցող բառերի շերտին» (Robinson, P. 1988):

Այս բառաշերտը, որ կազմում է լրագրության, մասնավորապես սպորտային լեզվի միջուկը, գնալով ավելի ու ավելի է համալրվում նոր բառերով, դրանք գիտության, արվեստի մշակույթի զարգացման, հարստացման հետևանքով ներառվում են հաղորդակցության ոլորտը, մտնում են համագործածական բառաշերտ, հարստացնում լեզուն (match, block, bean, bike, hammer, chuck, kick, status, committee, stadium, goal, player, administration, final, champion).

բ) խոսակցական բառաշերտ

Այս բառաշերտն ընդունված է անվանել առօրյա-խոսակցական, քանի որ լեզվի գործառույթյան բանավոր խոսակցական տարբերակն է: Դրան բնորոշ է անմիջականությունը, անբռնազբոսիկությունը: Այն բնորոշվում է սեղմությամբ, հուզաարտահայտչական բառերի, դարձվածքների գործածությամբ: Հայտնի է, որ այս բառաշերտի օգտագործումը տարբեր ոճերում (գեղարվեստական, հրապարակախոսական, նաև գիտական) կատարվում է ոճական նկատառումով, այն հաճախ կերպավորման, խոսքի պատկերավորման համար է օգտագործվում: Սպորտային բառապաշարում խոսակցական բառերի գործածությունը ևս մեծ տեղ է գրավում այն պատճառով, որ ռեպորտաժների, հարցազրույցների ընթացքում արտաբերված խոսքն անմիջական է, հաճախ չմշակված: Այն խոսողի անմիջական ապրումների, հույզերի արտահայտման միջոց է, որ բացահայտում է այս կամ այն անհատի (սովորաբար մարզիկի) ինչպես ապրումները, այնպես էլ լեզվամտածողության հաճախ ինքնատիպ դրսևորումները.

«Only you could bring a victory to team.

I could, I stopped the ball well enough, but the goalkeeper blocked my shoot. A metre to the right, a metre to the left, it would be "goal" certainly.

What a pity! Wazarin would say; "you need a good beat"».

Եվ կամ՝

«He didn't get it so clean, –commented he. My companion made a derisive smile.

- You see, he couldn't lift that frivolous weight either».

(Motion-Sport in Finland, 1/97, p.

27).

Սպորտային լեզվում ավելի զգալի է այսպես ասած առօրյա-խոսակցական բառապաշարը: Սա թեև այնքան էլ չի տարբերվում գրքային լեզվի բառապաշարից, այսուհանդերձ, զգալի է դրա անմիջական երանգը:

Այս բառաշերտում առավել զգալի է ժողովրդախոսակցական բառաշերտը (McCarthy M. 1988), այն խոսքին հաղորդում է կենդանի, աշխույժ երանգ: Այստեղ մեծ դեր են կատարում խոսակցական լեզվից եկող մի շարք բառեր, բառակապակցություններ, դարձվածքներ, օրինակ՝

«to take courage, to take risk, to guess, to manage, to lose control, to appease, to make somebody eat his word և այլն»:

«"The end! There is another record."

"No that is not the end" said the athlete sitting next to him. Now the weight will be weighed, then Vorov and he is lifting the weight, the record will not be scored.

- I'll make him eat his words.
- But he ought to take care of himself.
- How did he take risk!
- Try to lift the weight without eating something!».

(PANORAMA, N7-8, 1980,

p.25).

Մարզչի և ընկերոջ միջև երկխոսությունն իր անմիջականությամբ ընթերցողին մոտեցնում է սպորտային միջոցառման ներքին խոհանոցին. այստեղ ամեն ինչ որոշում են գրամները, որոնք նվաճվում են ֆիզիկական, բարոյական ուժերի անասելի կենտրոնացման, ճիգերի շնորհիվ: Մարզիկը հարկադրված ընթերել է՝ շատ լավ իմանալով, որ անձնական քաշը կարող է գերազանցել ընդունված չափը, բայց նրա համար պարզապես անհնարին է քաղցած ծանրաձողին մոտենալ: Սա գիտակցում են բոլորը՝ և՛ մարզիկը, և՛ մարզիչը, և՛ սովորական հանդիսատեսը: Եվ այս եզրահանգումը տրվում է պարզ, ժողովրդա-խոսակցական լեզվի միջոցով. "Try to lift the weight without eating something":

Այս բառաշերտում հայտնվում են նաև հասարակաբանական-խոսակցական բառերը, դրանք սովորաբար գրական լեզվի սահմաններից դուրս են, ունեն հուզաարտահայտչական երանգ և հիմնականում գործածվում են բացասական իմաստով՝ դրանք գռեհկաբանական երանգ ունեն (shut up, bastard, beast, blighter, bounder, dicky):

Սպորտային լեզվում հանդիպում ենք նաև ժարգոնային բառերի, որոնք սահմանափակ գործածություն ունեն՝ (cheat, beat the air, hair the grattes) եւ այլն:

Ընդհանրապես սրանց գործածությունը չի խրախուսվում, պարզապես այս կամ այն մարզիկին բնութագրելու, դիպուկ արտահայտությունների գործածման ժամանակ կարող են ոճական նկատառումով օգտագործվել:

«They cheated us. They didn't have any injured player».

(World basketball, 1995, N3,

p.18).

Ընդհանրապես խոսակցական բառաշերտը լայն զանգվածների հաղորդակցման մեջ մեծ տեղ է գրավում, առօրյա փոխհարաբերությունների միջոց է և շատ հաճախ ի հայտ է գալիս երկխոսությունների միջոցով: Այս ոճը բավականին «շարժուն» է. այն մշտապես ենթակա է փոփոխության և իր անմիջականությամբ խոսքին հաղորդում է ինքնատիպ, մտերմիկ բնույթ: Մասնավորապես, սպորտային ռեպորտաժում այս բառաշերտը «կերպարաստեղծման» ինքնատիպ, ոչ սխեմատիկ բնութագրումների լավագույն միջոց է: Այն բոլոր ոճերի հարստացման ու համալրման աղբյուրն է՝ լինի դա միջնորդավորված, թե անմիջականորեն: Պատահական չէ, որ Շառլ Բալլին խոսակցական լեզուն դիտում է որպես «նորմ»՝ իբրև լեզվի տարբերակային ձևերի գնահատման չափանիշ (Балли, 1961,18):

գ) Նորաբանություններ

Հասարակական կյանքի փոփոխությանը զուգընթաց փոփոխության է ենթարկվում նաև բառապաշարը: Սպորտային լեզուն իր մեջ է ներառում և այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք տվյալ ժամանակահատվածի համար նոր են, իսկ հետագայում դրանք դադարում են նորաբանություն լինելուց, որովհետև ընդգրկվում են ակտիվ բառապաշարի մեջ: Ընդհանրապես լրագրային նորաբանությունները հատուկ են սպորտային լեզվին.

«futsal, mini pitch, licence officer, 5th (fifth) official, FIFA commissioner, FIFA licence, licensed player, licensed coach, sub licence system, referee

observer, football agent, match agent, match bonus, golden goal, silver goal, grassroots football, fun football, foreigner quota, indoor pitch, indoor stadium, ground advertising, Hat-Trick project, JIRA project, FAIR PLAY, bookmaker, bookmakers favourites, football sweepstakes, football pools, anti-racism, anti-doping agency, anti-doping code, sponsor, artificial turf, synthetic turf, mini-tournament, FIFA Media Committee, Players' Status Committee, mixed zone, zorbeng, zubon, Transfer Committee, transfer certificate»

Սրանք հիմնականում բաղադրյալ բառեր են՝ կազմված բարդության և ածանցման շնորհիվ:

«snowboard, freestyle, overtime, playfellow, mountainbike, motorbike»

Նորաբանությունների մի մասն առաջանում է նախածանցների, ինչպես նաև վերջածանցների օգնությամբ, դրանք հաճախակի են գործածվում սպորտային տեղեկատվական տեքստերում:

«Committees, multilateral organisations, athletes and scientists should form an anti-doping agency and continually supervise adherence to the anti-doping code». *(WORLD HANDBALL magazine, 4/97, p. 9).*

«UEFA commends all initiatives that pro-actively address the serious problem of racism in football which threatens the spirit of Fair Play and taints football's role in society as a whole». *(COMMUNIQUE, Issue twelve, 2005 p. 2).*

REFERENCES

- Մելքոնյան Ս. *Ալեքսրկներ հայոց լեզվի ոճարանութիւն*, Ե., 1984. էջ 42:
- Балли Ш. *Французская стилистика*, М., 1961. с. 18.
- Валгина Н.С., Розенталь Д.Э. и др. *Современный русский язык*, М., 1971., с. 35, 301-313
- Виноградов В. *Русский язык*, М., 1980. – 639 с.
- Галкина-Федорук Е. и др., *Современный русский язык*, М., 1957. с. 79.
- Гвоздев А. Н. *Очерки по стилистике русского языка*, М., 1952. –335 с.
- Ефимов А. *Стилистика русского языка*, М., 1969. с. 196.
- Gairns R. and S. Kedman, *Working with Words*, Cambridge, 1986.
- McCathy M. *Some Vocabulary Patterns in Conversation*, 1988.
- Robinson P. *Components and Procedures in Vocabulary Learning*, Journal of Linguistics, 1988.
- Sheard B. *The Words We Use*. New York, 1962.
- Ulman S. *Words and Their Use*, Oxford, 1962.